

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հուլիսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում բարձր է եղել նորմայից 1-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 13-16-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է +35...+37^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +28...+30^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +36...+38^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +36...+38^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, Շիրակում՝ +28...+32^{0}C (Աշոցք՝ +26^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +28...+31^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35^{0}C, Գեղարքունիքում՝ +24...+29^{0}C (Մարտունի՝ +30^{0}C), Լոռիում՝ +28...+31^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +37...+39^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +27...+29^{0}C, նախալեռներում՝ +32...+37^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 11-ին. Շիրակում գրանցվել է +10...+12^{0}C (Աշոցք՝ +4^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +11...+13^{0}C (Հանքավան՝ +6^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +15...+17^{0}C, Տավուշում +15...+17^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +7...+9^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +15...+17^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +16...+20^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +7...+12^{0}C, Գեղարքունիքում՝ +8...+13^{0}C (Գավառ՝ +7^{0}C, Մասրիկ՝ +6^{0}C), Լոռիում՝ +10 ...+14^{0}C (Տաշիր՝ +8^{0}C), Արմավիրում, Արարատում՝ +15...+20^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +6...+10^{0}C, նախալեռներում՝ +15...+18^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 13-22մմ (108-157%), Լոռիում՝ 13-48մմ (76-166%), Տավուշում՝ 0.4-3մմ (3-27%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 9-10մմ (41-43%), նախալեռներում՝ 2-5մմ (27-45%), Գեղարքունիքում՝ 1-8մմ (7-53%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0.4-4մմ (3-33%), նախալեռներում՝ 0.4մմ (5%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0.3մմ (3%), նախալեռներում՝ 2մմ (40%), Արմավիրում՝ 0.3-0.4մմ (8-10%), Արարատում, Սյունիքում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հուլիսի 11-ին. լեռնային շրջաններում՝ +5...+10^{0}C, առանձին լեռնային շրջաններում՝ +11...+13^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +13....+18^{0}C:



Մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարները լեռնային շրջաններում 20սմ խորության վրա կազմել են 18-30%, նախալեռնային շրջաններում՝ 20-35%, հովտային շրջաններում՝ 15-25%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 25-35%, նախալեռնային շրջաններում՝ 22-45%, հովտային շրջաններում՝ 20-40%:



Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել է մշակաբույսերի աճն ու զարգացումը:

Եղանակային պայմաններն նպաստավոր են եղել մշակաբույսերի հասունացման և բերքահավաքի համար:

Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների, բանջարանոցային, բանջարաբոստանային մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է պտղատուների, աշնանացան ցորենի, եգիպտացորենի հասունացումը, կատարվել է բերքահավաք և բանջարանոցային մշակաբույսերի դաշտերում միջշարքային փխրեցում:

Առանձին լեռնային շրջաններում հացահատիկային մշակաբույսերը հասունացել են. կատարվել է բերքահավաք, մնացած լեռնային շրջաններում շարունակվել են գտնվել կաթնային և մոմային հասունացման փուլերում:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ